

# ՏՄԱՐԱՐՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*«Ձայդ որ սերմանէ ճշդելով՝  
ճշդելով եւ հնձեսցէ,  
եւ որ սերմանէ առատութեամբ՝  
առատութեամբ եւ հնձեսցէ»  
/Բ ԿՈՐՆԹ. Թ 7/*

Հօգու բրթիւով և անհուն երկյուղով էին հունիսի 2-ին Մայրավանճում մատուցվող Սուրբ և Անմահ Պատարագին իրենց մասնակցությունը բերել հավատացյալ հայորդիները, քանզի ձեռամբ գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանի և խորատվիլակութեամբ հոգեշնորհ Տ. Անուշավան արքեպ ժամկոչյանի, քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ վեց բարեշնորհ սարկավազներ՝ Սամվել Հովակիմյանը, Հովհաննես Մարտիրոսյանը, Գաբրիել Մնացականյանը, Եսայի Կարաղյանը, Ջանիկ Պողոսյանը և Սարգիս Մուշատյանը:

Ըստ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետության, քահանան ժամերգություն կատարողն ու Պատարագ մատուցողն է, ժողովրդին Աստվածպաշտություն քարոզողը, հուսաբասներին, հիվանդներին և տառապյալներին մխիթարողը, տներն օրհնողն ու մկրտության, պսակի խորհուրդները, թաղման կարգ կատարողը: Քահանայության երկու տեսակ կա՝ ամուսնացյալ և կուսակրոն:

Այո՛, քահանայությունը եկեղեցական մասնավոր իշխանություն է, որը եպիսկոպոսները ձեռնադրությամբ և օծումով են շնորհում ուսյալ, բարեպաշտ ու ծառայասեր անձերին:

Սուրբ և Անմահ Պատարագի նախընթաց օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, նախ «Լույս զվարթ» շարականի երգեցողությամբ խնկարկվում է Մայրավանճը: Հավաստ ժամերգության, իրենց խոնարհությունը դրսևորելով, «Նայեալ և լուր» շարականի ուղեկցությամբ, երեք հանգրվաններով սարկավազները մտնում են Արքություն Արքոց Իջման Սեղանին, որի առջև, գանիկ բազմած սրբազան հայրը կատարելու էր հավատի ֆնություն:

Խոստովանաձայրը ներկայացնում է ընծայացումներին և պատասխանում ձեռնադրող սրբազանի հարցերին: Ահա և հանձնառության պահը: Սարկավազներն ուխտում են հետևել Տիրոջ պատգամներին և հնազանդվել Հայաստանյայց եկեղեցու կանոններին. «*Յանձն առնու՛ք կատարել զամենայն հրամանս ձեր, ըստ կանոնի սրբոյն գնայ, և ոչ լուծանել կամ հակառակ առաջնոյն կազ*»:

Մայր Տանարում կիրակնօրյա Սուրբ և Անմահ Պատարագ է մատուցվում: Օրվա պատարագիչն է ձեռնադրող սրբազան հայրը՝ գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը: Հընթացս մատուցվող Ս. Պատարագի, տեղի է ունենում ընծայյալներին աշխարհից երաժարման արարողությունը և քահանայական ձեռնադրությունը:

Ահա և աշխարհից հրաժարման պահը: Նորընծաները Մայր Տանարի Ավագ Խորանի աստիճաններով ծնրադիր վեր են բարձրանում և, դառնալով դեպի ներկա հավատացյալները, «Աստուածային եւ երկնային» շարականի երգեցողությամբ ներքո վեր բարձրացնում ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման և ի նվիրումն հոգևոր կյանքին:

Շարունակվում է «Աստուածային և երկնային շնորհ» շարականի երգեցողությունը: Նվիրյալները ծնրադիր մտտեմում են ձեռնադրող սրբազանին, որ ձեռնադրության «Մաշտոց»-ից ընթերցելով համապատասխան հատվածը, նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունից սարկավագությունից կոչում է ֆահանայության: Նորընծաները շրջվում են դեպի Ավագ Խորան, և ձեռնադրող սրբազան Հայրը, ձեռքերը խաչածեղևի վրա դնելով նրանցից յուրաքանչյուրի գլխին, ասում է. *«Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»*: Հավատացյալ ժողովուրդը, հոգեպես միաձուլվելով արարողությանը, համոզումով և գոհունակությամբ ասում է՝ «Արժանի են»:

Այնուհետև սրբազան Հայրը սարկավագական ուրարը, որ Քրիստոսի լծի խորհրդանիշն է, վերածում է ֆահանայական փորուրարի: Ահա և Ս. Պատարագի ամենախորհրդավոր պահը: Վերաբերող Հայր Սուրբը Սրբաբանից բերում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենդանի և կենդանարար մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու գինին պարունակող սկիհը: Պատարագիչ սրբազանը սկիհով օրհնում է հավատացյալ ժողովուրդին: Նորընծաներն ստանում են նաև ֆահանայական փիլոն և պատարագչի զգեստներ: Փիլոնի սև գույնը խորհրդանշում է ամբողջական հրաժարումն աշխարհից: Քահանայական բագի և շուրջառի



ՉԵՈՆԱԳՐՎՈՂՆԵՐԻՆ Ե ՊԻՄՈՒՄ ԵՎԵ ՍՐԲԱԶԱՆԸ

տվչությունը խորհրդանիշն է հոգևոր իշխանության:

Հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր բարձունքին: «Կենդանարար Աստված» շարականի ուղեկցությամբ վերաբերող Հայր Սուրբը

Մկրտություն Սուրբ Ավագանից դեպի Սուրբ Խորան է տանում Մյուռոնոբափ Աղավնի՛ն՝ լի սրբալույս ու կենարար Մյուռոնով, որ Սուրբ Հոգու խորհրդանշանն է: «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգեցողությամբ Սրբազան Հայրը Մյուռոնն Աղավնուց հեղում է բթնոցի մեջ՝ որպես խորհրդանշան Սուրբ Հոգու էջփ:

Ահա և օժիտն պահը, որի ընթացքում, Արքայուլյս Մյուռոնի դրոշմամբ, Սուրբ Հոգու դրոշմներն են տրվում ընծայացուններին: Կատարվում է նոր անվան շնորհում՝ անվանակոչություն: Սամվել սարկավազը վերանվանվում է Տ. Արզար ֆահանա, Հովհաննեսը՝ Տ. Տրդատ, Գարունը՝ Տ. Աշոտ, Եսային՝ Տ. Ջարհի, Ջանիկը՝ Տ. Սմբատ, Սարգիսը՝ Տ. Մկրտիչ: Անվանակոչությունը պարագրում է հետևյալ խորհուրդը, այս կերպ ասես մեռնում է հին մարդը և ծնվում՝ նորը:

Հաջորդ արարողությամբ Արքազան Հայրն աղոթասացությամբ օծյալներին է փոխանցում սկիւնը, որի հետ մեկտեղ փոխանցում է նաև Պատարագելու և Ամենակարող Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը բաշխելու իրավունքը: Ապա ձեռնադրող Արքազանը հրավիրում է նորած խահանգներին՝ իրենց անդրանիկ օրհնությունը բաշխելու հավատավոր ժողովրդին:

Այնուհետև Շահե Արքազանը ներկայներին է դիմում օրվա խորհրդին պատշաճող գեղեցիկ ֆարազով, իր շնորհավորանքի խոսքն ուղղում նորընծա խահանգներին, պատգամում հավատարիմ մնալ իրենց ուխտին, ունենալ անսասան հավատք, անմար պահել Ա. Գրիգոր Լուսավորչից ավանդված հավատի կանքնը:

**ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԺԷՄԵԱՆԻ**

**ԽՕՍՔԸ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ**

*Հոյժ գկօշիկս քո յոտից. զի գտեղիդ յորում կաս դու  
ի դմա՝ երկիր սուրբ է: Ելից Գ 5*

Սոյն խօսքերը, ծանօթ ձեզի, նորընծայ քահանայ Հայրեր, այնքան յարմար են այսօրուամ, երբ դուք ուղի դրիք քահանայութեան աստիճանին վրայ: Անկէզ մորեմիէ մը կուզան անոնք ձեզի, որ այս Սուրբ Սեղանն է և զայն լուսաւորող Լուսաւորչի կանթեղը: Նայեցէք անոր հովիտի աչքով, ինչպէս Մովսէսն էր և ան պիտի խօսի ձեզի հետ, ըսելու թէ դուք, որ եկաք դէմ յանդիման Անոր, լսեցէք անոր ձայնը, որ կանչեց ձեզ ձեր նոր անունով և դուք պատասխանեցիք «այստեղ եմք, Տէր, քու դիմացդ կանգնած»: Այն պահում Աստուածային ձայնը, իմ բերանովս ըսաւ. «Հանեցէք ձեր ոտքից կօշիկները, ազատուեցէք ձեր ոտնամաններէն, որոնք մինչև հիմա քալած են այս աշխարհի փոշիներում մէջ, ցեխոտ ճամբաներով, մաքրուեցէք այս աշխարհի տիղմերէն, որովհետև հոն ուր դուք կեցած էք, երկիր սուրբ է»:

Դուք բարձրացուցիք ձեր ձեռքերը, հրաժարեցաք աշխարհի լայն բացուած ճանապարհներէն և հաւատարմութեան ուխտ ըրիք, քալելու սրբութեան և մաքրութեան, նուիրումի և ծառայութեան նեղ և փշոտ ճանապարհով: Այսօր Աստուած կը շարունակէ իր խօսակցութիւնը ձեզի հետ, կրկնելու ինչ որ ըսաւ Մովսէսի. «Ես եմ ձեր հայրերու Աստուածը, ես տեսայ իմ ժողովուրդիս նեղութիւնները և լսեցի անոնց լացը. ես ծանօթ եմ անոր տառապանքին և վար

եկայ փրկելու համար զայն": Իսկ դուք, երբ Մովսեսի նման պատասխանեցիք. "Բայց ո՞վ եմք մեք, որ Տէր, որ քու ժողովուրդդ դուրս բերեմք և ազատագրեմք": Այն ատեն Ան պիտի ըսէ ձեզի. "Բայց ես ձեր կողքին պիտի ըլլամ և դուք պիտի բերէք իմ ժողովուրդս ծառայելու Աստուծոյ՝ իր լերան բարձունքից վրայ":

Սիրելի Նորընծաներ,

Այն օրէն ի վեր, երբ մեր ժողովուրդի մեծ մարգարէն և առաջնորդը՝ Ս. Գրիգոր Լուսատւրիչը Հայաստան աշխարհի, դուրս բերաւ Հայ ժողովուրդը սնապաշտութեան խաւարէն և բացաւ ամոր աչքերը Աստուծոյ լոյսին, հաւատքը՝ թէ Աստուած մեզի հետ է միշտ, ապրեցուց մեր Ազգը սուրբ հողի վրայ, որ մեր Եկեղեցին է՝ հարկ սրբութեան և տեղի փառաբանութեան, հրեշտակաց բնակարան և մարդոց քաւարան: Ամոր լուսատւր տեսիլքէն ծնունդ առաւ Սուրբ Լեռը՝ Միածնի յայտնութեան այս վայրը, որուն բարձունքներէն մեր Սուրբ Հայրապետները իջեցուցին երկնային մասնաման, Ս. Աւետարանը, որուն սնունդով ամրացաւ մեր հոգին:

Երկար դարեր, առատօտեան ծագող արևին հետ, հնչեցին զանգերը մեր լեռներն ի վար և մեր ժողովուրդը նայեցաւ վեր ու երգեց

Լոյս, արարիչ լուսոյ  
առաջին լոյս,  
ի ծագել լուսոյ առաւօտու,  
ծագեալ ի հոգիս մեր,  
զլոյս քո իմանալի:

Երկար դարեր, մեր վանքերուն մեծ աղօթողները՝ սիրողք Քրիստոսի ճգնաւորները, եղան քարեխօս առ Աստուած, որ պահէ ու պաշտպանէ մայրենի մեր հողը, ի շինութիւն և ի խաղաղութիւն:

Ամէն անգամ որ ոսոխ մը չար զօրացաւ, մեր հաւատացեալ ժողովուրդը աւելի զօրացած իր միութեամբ Ս. Խաչի դրօշին տակ, պաշտպանեց մեր հողը նահատակի իր արիւնքով, որովհետև հաւատաց թէ սուրը անզօր է հոգիի զէնքին դիմաց:

Մեր հայրենիքին մէջ թէ օտար երկիր, որքան ատեն որ հաւատարիմ մնացինք մեր սուրբ հողին վրայ՝ մեր Ս. Եկեղեցիի կամարներուն տակ, որքան ատեն որ անկէզ մորենիէն լսուեցաւ ձայն մը, որ իրեն ծառայութեան կանչեց նոր հովիւ մը, մենք հետեւեցանք Աստուծոյ ընտրեալներուն և դուրս եկանք մեր ցաւերու աշխարհէն և շարունակեցինք ապրիլ մեր հայրերու հաւատքը, սրտով և ճշմարտութեամբ:

Եւ ահա, թշնամիի սուրէն աւելի մահացու և չարիմ խայթոցէն աւելի թունաւոր մեր այս դարը, այսպէս կոչուած գիտութեան այս դարը, եղաւ կոտորածներու դար, շքեց մեր զոյութիւնը պատմական մեր հողին վրայ և հայրենի հողին վրայ որոշեց սպաննել մեր հոգին: Իր նմանին դէմ զազանացած հայ մարդիկ զտնուեցան, որոնք մեր քաղաքներու իրաքանչիւր թաղամասի քնակիչներուն ծառայող Եկեղեցին քանդեցին հոն կառուցանելու համար կինո-թատրոն, մեր իրաքանչիւր լեռ ու բլուրի վրայ կանգնած և դէպ Աստուած տամող վանքեր ամայացուցին, լուեցուցին աղօթքի հրաւիրող զանգերը և կտրեցին ամէն հաղորդութիւն սրբութեան

հետ: Անելին, ամոնք կապեցին երեխաներու վիզին կարմիր շղթայ մը քաշկոտելու համար զանոնք դէպի անաստուածութիւն քարոզող ակումբներ: Փորձեցին քրիստոնեայ մեր ժողովուրդը կտրել իր հայրերու հաւատքէն, սպաննել ազգային զգացումները, ոտնակոխ ընել սրբութիւնները . և փորձել մարել Լուսաւորչի կանթեղը:

Սակայն Աստուած լսեց իրեն հաւատարիմ մնացած ժողովուրդին լացը և տառապանքին ձայնը: Անկէզ մորեմին դարձեալ ու դարձեալ խօսեցաւ և ընտրեալներու ուղղեց իր կռքը. լուծէ՛ կօշիկդ և եկուր կենալու սուրբ հողի վրայ, հաւատքի հողին վրայ: Չըլլայ փորձուիս մտածելու թէ դուն տկար ես դուրս բերելու համար Աստուծոյ ժողովուրդը իր կորուստի ճամապարհէն, որովհետև քու հայրերու Աստուածը, որ քարերէն անգամ Աբրահամի զաւակներ կը յարուցամէ, պիտի ըլլայ քեզի հետ, շարունակ, և դուն պիտի կատարես քեզ վստահուած առաքելութիւնը: Դուն պիտի երթաս անաստուածութեան մոլորեցում մէջ թափառող հոգիներուն մաքուր ոտքերով և ամոնք պիտի լսեն բարի հովիւի քու ձայնդ և պիտի վերադառնան իրենց լոյս հաւատքիմ, պիտի վերակառուցեն իրենց Եկեղեցին, պիտի վերածնին ամոր աւազանէն, պիտի ուխտեն հաւատարիմ մնալ իրենց հայրերու հաւատքիմ և դուն, Պօղոս Առաքեալին հետ պիտի ըսես. զհաւատսմ պահեցի:

**Նորընծայ Հայրեր.**

Աստուած կը սիրէ փոքրիկ իր հօտը և այդ սիրոյմ արտայայտութիւնն է իմչ որ կատարուեցաւ այսօր Սուրբ այս Սեղանին բարձունքին: Դուք հետևեցաք ձեր անձի վկայութեան և ընծայեցիք ձեր ծառայութիւնը մեր Սուրբ Եկեղեցիին, սուրբ սրտի և անկեղծատր հաւատքով: Հաւատարիմ վնացէք դուք ձեզի և մենք բոլորս՝ Հայրց Հայրապետ, եկեղեցականներու դասը և հաւատացեալները բոլորս փառք կուտանք Աստուծոյ և կը հայցենք ամոր օրհնութիւնները մեր հայրենիքին յառաջդիմութեան, ամոր դեկավարներուն իմաստութեան և ամոր ծառայողներուն յաջողութեան համար:

Տէրը միշտ լիմի մեզ հետ և ձեզ հետ, ամէն:

Հավարտ ձեռնադրութեան, նորընծաներին իր հայրական պատգամն է տալիս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը: Բարձր զնահատելով իմենընծայման գեղեցիկ արարքը, Վեհափառ Տերը խնդրում է Ամենակարող Տիրոջից. *«...պահնացէ քաղցրութեամբ և ամրացուցէ օրհնութեամբ և ծաղկազարդեցէ շնորհատիպութեամբ զմիտս և զգալարանս ձեր, զսիրտք և զխորհուրդս ձեր, զբանս և զգործս ձեր, զմուտս և զելս ձեր՝ ընդ ամրածածուկ աշոյն իրոյ, հզօր ձեռամբ և բարձր բազկաւս հեղուով ի վերայ ձեր գշնորհս ճառագայթից լուսոյ Հոգոյն Սրբոյ ձեռնազան պայծառութեամբ, որպէս ի դասս առաքելոցն հրաբորոքք ծառայմամբ՝ հրազինեալ զձեզ ընդ հրեղինացն շնորհաբաշխութեամբ»:*

Նույն օրը, հավարտ երկկոյն ժամերգութեան, կատարվում է «Օրհնութիւն արքայի» կամ «Օրհնութիւն վեղարի» կարգը, որը կուսակրօնութեան խորհրդանիշն է, ինչպես նաև նշանակում է, թե նորընծաներն այս կերպ պսակվում



**ՆՈՐԱՆԾԱՆԵՐԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԻՐ ՊԱՏԳԱՄՆ Է ՏԱԼԻՍ ՎԵՐԱԾԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ**

են Մայր Եկեղեցու հետ: Վեց ձեռնադրյալներից հինգը, բացի Տ. Մկրտիչ ֆահանայից, ընտրում են կուսակրոնության ուղին:

Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը նորընծաների գլխից հանում է սարկավագական ջրոնը՝ /թասակը/՝ այն փոխարինելով կուսակրոն ֆահանայության խորհրդանիշ վեղարով, ասելով. «*Հանց է Աստուած զհին մարդն գործովք իրովք: Աստուած զգեցուցէ ձեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ և ճշմարտութեամբ... կանխեալ ի սէրն Աստուծոյ հոգւով ի տուէ և ի գիշերի*»:

Հանդիսավոր արարողությունից հետո նորընծաներն ուղղվում են դեպի Վեհարան, ուր Ամենայն Հայոց Հայրապետը մեկ անգամ ևս իր հայրական օրհնությունն ու խրատներն է քաշխում նորընծաներին, ցանկանում նրանց տեսնել Հայ առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր սպասավորների շարքում՝ որպես «մշակ և առանց ամօթյ...»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ